բաժվող թուրքական պատմագրության վարկածը, թե հայկական ցեղասպանություն չի եղել։

Իր հետազոտության մեջ Ուլե Ցայգելը նշում է, որ հայերի խոշտանգումները՝ մեր դարի առաջին ցեղասպանությունը, անհերքելի պատմական փաստ է։

Գրախոսվող աշխատությունը արժեքավոր ներդրում է ոչ միայն գերմանական բողոքական եկեղեցու պատմագրության մեջ, այլև կարևոր փուլ է Հայկական հարցի և Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած հայերի ցեղասպանության վերաբերյալ գերմանական պատմագրության մեջ։

Ա. Լ. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

Ա. Ս. ԽԱՌԱՏՅԱՆ. Արևմտահայ մամուլը և գրաքննությունը Օսմանյան Թուրքիայում *(1857—1908). Երևան, 1989, 379 էջ։*

Պատմական գիտությունների դոկտոր Ա. Խառատյանի գրախոսվող աշխատությունը ընդգրկում է XIX դարի երկրորդ կեսի և XX դարի առաջին տասնամյակի արևմտահայ մամուլի հետ առնչվող իրադարձությունները։ Զրկված լինելով գրաքննական արխիվներին ծանոթանալու հնարավորությունից, որոնք մամուլի պատմության առաջին և անփոխարինելի աղբյուրներն են, Խառատյանը տարիների տքնաջան աշխատանքով, այնուամենայնիվ, կարողացել է ձեռք բերել այն բոլոր անհրաժեշտ նյութերն ու փաստերը, որոնք հետագայում պետք է դառնային քննարկվող գրքի հուսալի հիմքը։ Մենագրության հիմնական աղբյուրներն են հայ պարբերական մամուլի օրգանները, որոնք սակայն, միշտ չէ, որ Օսմանյան Թուրքիայում տպագրվել են անխաթար։ Արևմտահայ իրականության և մամուլի մասին պատմող նյութերին հեղինակը ծանոթացել է նաև արևելահայ թերթերում տպագրված արևմտահայ գործիչների թղթակցություններից։ Գրքում օգտագործված գրականության մեջ մեծ թիվ են կազմում ժամանակի և հետագայի արևմտահայ գրողների և պատմաբանների աշխատությունները ու հուշագրությունները։ Լեզուների իմացությունը հեղինակին հնարավորություն է տվել օգտվելու ոչ միայն ռուսական ու անգլիական, այլև թուրքական համապատասխան մասնագիտական աղբյուրներից, որոնք արժեքավոր նյութեր են պարունակում թուրքական պետականության քաղաքականությունն իրականացնող գրաքննության գործելակերպի, երկրում տպագրված բազմալեզու պարբերականների նկատմամբ կառավարության տարբերակված վերաբերմունքի, տպագրական օրենքների մասին։ Խառատյանի գիրքը այսօրվա մեր ընթերցողին տեսանելի է դարձնում օսմանյան գրաքննության կառուցվածքը, այն նպատակային քաղաքականության տրամաբանությունը, որով սուլթանական կառավարությունը հետևողականորեն պայքարում էր հպատակ ժողովուրդների ազգային ինքնագիտակցության արտահայտությունների, նրանց ազգային ինքնորոշման գաղափարների ու շարժումների դեմ։

Օսմանյան առաջին՝ «Տպարանների օրենքը», որը նախատեսված էր միայն գրականության նախնական գրաքննության համար, ընտեղծվել է 1857 թ.։ «Մամուլի օրենքն» ընդունվել է ավելի ուշ, 1864-ին։ 1867 թ. թուրքական լիբերալ թերթերի քննադատական ելույթները զսպելու նպատակով հաստատվում է նոր՝ «Ժամանակավոր որոշումը», որը հարատևում է մինչև 1908 թ.։ Ա. Խառատյանը բնագրային ճշգրտությամբ մամուլի հայ պատմաբաններին է տրամադրում գրաքննական վերոհիշյալ օրենքների բովանդակությունը (բաժինները, հոդվածները, զանցանքների համար սահմանված պատժաչափերը և այլն)։ Թեև մամուլի օրգանները դեռևս նախնական գրաքննության չէին ենթարկվում, բայց, ինչպես հավաստում է գրքի հեղինակը, գրաքննության այդ օրենքները կազմված էին այնքան հնարամտորեն, որ փոքր [illegible]ությունների, մասնավորապես հայերի մամուլը մշտապես պահում էին ոստիկանական [illegible] աքցանի մեջ։

Տպագրական տեսչությունն առանձնահատուկ ուշադրություն էր նվիրում գավառներում տիրող հարստահարությունների և օրենքների չարաշահումների մասին տպագրվող նյութերին, որոնց հրապարակումների համար հայկական թերթերը տարբեր ժամկետներով խափանվում և կամ վերջնականապես փակվում էին։ Այսպես, հեղինակի հաշվարկներով 1875—1878 թթ. Թուրքիայում փակվել են 20 անուն հայերեն և հայատառ թուրքերեն թերթեր։

Աշխատության լավագույն բաժիններից է «Մամուլը Աբդուլ Համիդի բռնակալության ժամանակաշրջանում» գլուխը, որտեղ հանգամանորեն խոսվում է 1880—1900-ական թթ. գրաքննության խստացումների և հայ լրագրողների գերմարդկային ջանքերի մասին՝ պահպանելու համար թերթերի գոյությունը։ Ասել, թե այդ շրջանի արևմտահայ իրականության հասարակական, քաղաքական և մշակութային կյանքում կատարված փոփոխությունները ու հայ մամուլի օրհասական վիճակն անծանոթ են մեր սերնդի գործիչներին, սխալ կլինի։ Ընդհակառակն, թե՛ հայ ժողովրդի պատմության ու նշված ժամանակաշրջանի գրականության պատմության հատորներում և թե՛ բազմաթիվ մենագրություններում ու հուշագրություններում հանգամանորեն ներկայացված է պատմական այն իրավիճակը, որը ռուս-թուրքական պատերազմից հետո ծրագրված կերպով տանում էր դեպի հայության ինքնության բռնի ոչնչացումը, բարենորոգումների խնդիրը և առհասարակ Հայկական հարցի պրոբլեմը մեկընդմիշտ օրակարգից հանելու։ Սակայն Խառատյանը կարողացել է պատմական ժամանակաշրջանի իրադարձությունների խորքում մեզ անծանոթ նորանոր ծալքեր ի հայտ բերել։ Համապատասխան օրենսդրական վավերագրերի միջոցով նա տեսանելի է դարձրել կառավարության կողմից հայության նկատմամբ ձեռնարկված բռնությունների իրավական մեխանիզմը։

Փաստական հարուստ նյութերի օգնությամբ նա վերականգնել է ժամանակին Կոստանդնուպոլսում հրատարակված թուրքական թերթերի և եվրոպական լեզուներով տպագրված պարբերականների իրավական բացառիկ վիճակը, գրաքննական տեսչության բարեհաճ վերաբերմունքը դրանց նկատմամբ և, որ կարևորն է, կառավարության ձայնափողը դարձած մասնավոր թերթերի աղետալի դերը հայության ճակատագրում։ Այսպես, բացահայտելով Ահմեդ Միդհատի խմբագրությամբ հրատարակված «Թերճեմանը հաղըգաթ» և «Օսմանլը» թերթերի դերը հայերի դեմ մղված անազնիվ պայքարում, Խառատյանը «ժառանգական» համոզիչ կապեր է հայտնաբերում դրանց և մեր ժամանակների թուրք պատմաբանների գաղափարախոսության միջև։ Նա գրում է. «Ի դեպ, պատմության ժամանակակից թուրք կեղծարարները, ի դեմս այս երկու թերթերի, ունեն իրենց ուսուցիչներին, երբ ցեղասպանության զոհ դարձած արևմտահայությանը մեղադրում են իրենց իսկ՝ թուրքական ջարդարարների կատարած հանցագործության մեջ, զրպարտում նրան՝ «մահմեդական խաղաղ բնակչությանը հարստահարելու և կոտորելու համար» (229)։

Եթե 1880-ական թթ., հեղինակի բնութագրությամբ, Աբդուլ Համիդը «հետամտում էր Հայկական հարցը վերացնել արևմտահայության, իբրև առանձին հանրության հատկանիշների ոչնչացումով», ապա 1890-ական թթ. իրենց հետ բերում են հայ ժողովրդի ֆիզիկական ոչնչացման արհավիրքը։ 1894—1896 թթ. հայկական ջարդերի շրջանում և դրանից հետո թուրքական գրաքննությունը մոլեգնում է։ Արգելվում էր գավառների ռեալ իրավիճակի և հայկական կոտորածների մասին տեղական կամ թարգմանական հաղորդումների տպագրությունը, իբրև լրատվական միակ միջոց թերթերին պարտադրվում էին սարքովի «պաշտոնական զեկույցները», որոնք աղավաղված ձևով էին ներկայացնում իրականությունը։ Առհասարակ տպագրվելիք նյութերը քննվում էին մի քանի օղակներում, որի հետևանքով լրատվությունն աղքատանում էր և կորցնում նշանակությունը։

Այս տարիներին եթե եվրոպական թերթերի խմբագիրները կաշառվում էին, իսկ թուրք խմբագիրները նույնիսկ նպաստ ստանում և ազատվում հարկատվությունից, հայկական ու հունական թերթերի խմբագիրները հարկ էին մուծում, հայկական նշանավոր թերթերը պարբերաբար խափանվում էին, իսկ խմբագիրները՝ հետապնդվում և հալածվում։ Իբրև օրինակ, ամեն տարի թերթերը մեծ հանդիսավորությամբ նշում էին սուլթանի ծննդյան և գահակալության տարեդարձի օրերը։

1890-ական թթ. և դարասկզբին արևմտահայ մամուլի էջերում այլևս չեն երևում երկրի սոցիալ-տնտեսական ու հասարակական կյանքը լուսաբանող նյութեր. արգելվում են բանավիճային և երգիծական բաժինները, չքանում են ռուսահայ կյանքին վերաբերող լրատվությունները, որոնք զգալի տեղ էին գրավում 1880-ական թթ. պարբերականներում։ Համապատասխանաբար աղքատանում են և արևմտահայ կյանքը լուսաբանող թղթակցությունները արևելահայ մամուլում։ Սակայն այս ամենը դեռևս չէր կարող խափանել հայության մտավոր կյանքի առաջընթացը։ Արևմտահայ մամուլի անցած արգասավոր ճանապարհի ավանդույթներն ավելի կենսունակ էին, քան այդ կարող էին ենթադրել սուլթանական բռնապետության մեծ վեզիրներն ու տպագրական տեսչության աստիճանավորները։

Խառատյանը գրում է, որ արևմտահայ մամուլն այդ դժվարագույն տարիներին իսկ շարունակում էր կատարել «ազգային ինքնագիտակցությունը խորացնողի իր դերը»։ Հիրավի, այդ տարիներին արևմտահայ գրողների ընտրանին, հանձինս Գր. Զոհրապի, Լ. Բաշալյանի, Տ. Կամսարականի, Հր. Ասատուրի և նրանց գրչակից գործիքների, հարկադրված լինելով թողնել քաղաքական հրապարակախոսությունը, մամուլի էջերում ընթերցողների ուշադրությունը բևեռեց գրականության, թարգմանական երկերի, գավառահայ կյանքի այլևայլ կողմերի վրա։ Նրանք քննարկում էին արևմտահայ ժողովրդի կյանքի ու կենցաղի առանձնահատկությունները, գաղթականության և դավանափոխության պրոբլեմները, հրապարակում ազգագրական մեծարժեք նյութեր։

Գրքում հիմնավորապես լուսաբանված են հայ դեմոկրատ հրապարակախոսների և պատրիարքարանի միջև ստեղծված բարդ փոխհարաբերությունները 1860-ական թթ.։ Հեղինակն ամենայն մանրամասնությամբ ներկայացրել է 1863-ին ազգային վարչության մշակած տպագրական օրենքի հետ կապված պատմությունը, որի համաձայն պաշտոնական գրաքննությանը զուգահեռ ծրագրվում էր ստեղծել գրաքննական մի նոր հանձնաժողով։ Այն նախատեսված էր սահմանափակելու դեմոկրատական օրգանների ազատությունը և դրանք կախվածության մեջ պահելու պատրիարքարանից։ Օրենքի նախագիծը, որն, ի դեպ, չի հաստատվում կառավարության կողմից, յուրատեսակ փորձաքար է դառնում որոշելու հայ պարբերաթերթերի ուղղությունն ու հավատամքը։ Այս իմաստով մեծ հետաքրքրություն է ներկայացնում մամուլի ազատության հարցին նվիրված բանավեճերի պատկերումը գրքում, որոնք տարվել են դեմոկրատական «Մեղու», «Ծաղիկ», «Արևելյան մամուլ» պարբերականների և հետադիմական օրգաններ «Արշալույս Արարատյանի», «Ժամանակի», «Արևելյան դարի» միջև։

Ժամանակին մեծ աղմուկ հանած այս օրինագծով խմբագիրներին արգելվում էր գրել Սահմանադրության, կրոնի, ազգային վարչության, պատրիարքի, առաջնորդների և պաշտոնատար այլ անձանց դեմ։ Հարությունն Սվաճյանն ընդդիմանում է այդ բռնությանը և անհաշտ պայքար ծավալում մամուլի ազատության դեմ կատարվող ոտնձգությունների դեմ։ Այս բուռն իրադարձությունների բովում ժամանակ առ ժամանակ խափանվում էին «Մեղուն», «Մյունատիի էրեֆասը», «Ծաղիկը» և այլ պարբերաթերթեր, ընդ որում մի շարք դեպքերում պատրիարքարանի բողոքների հիման վրա։

Քննարկվող մենագրության անվիճելի արժանիքներից պետք է համարել նաև այն, որ գրաքննության պատմության ընդհանուր ֆոնի վրա հեղինակը բնութագրել է արևմտահայ մամուլի աշքի ընկնող օրգանները, մատնանշել դրանց քաղաքական դիրքորոշումը, վեր հանել հասարակական կյանքում ունեցած դերն ու նշանակությունը։ Այսպես, Խառատյանը մեծ տեղ է նվիրել Կ. Յուրյանի «Մասիս» թերթին և դրա էջերում տպագրված կարևոր նյութերի քննությանը։ Նա միանգամայն համոզիչ փաստերով վերլուծել է «Մասիսի» խմբագրի ճկուն քաղաքականությունը, որի շնորհիվ նրա թերթը մի քանի տասնամյակ զերծ է մնացել գրաքննական հետապնդումներից։ Գրքի արժեքավոր էջերից են Կ. Փանոսյանի «Մանղումեի էֆքյարը» հայատառ թուրքերեն թերթին նվիրված հատվածները։ Հայատառ թուրքերեն պարբերականները, որոնք հրատարակվում էին թրքախոս հայերի համար, կազմել են հայ պարբերական մամուլի մի կարևոր մասը։ Դրանք, տակավին, լեզվի անմատչելիության պատճառով նույնիսկ այսօր մամուլի պատմաբաններ համար մնում են իբրև մի փակ աշխարհ։ Հայատառ թուրքերեն մամուլի ուսումնասիրության շնորհակալ գործն սկսել էր վաստակաշատ բանասեր Գառնիկ Ստեփանյանը, որի «Հայատառ թուրքերեն հայ մամուլը» հոդվածը այդ ուղղությամբ կատարված առաջին քայլն էր[1]։ Խառատյանի մենագրության այն բաժինները, որտեղ խոսվում է հայատառ թուրքերեն թերթերի շուրջ, նորություն են և պատկերացում են տալիս XIX դարի երկրորդ կեսին լայն տարածում գտած հայ մամուլի այդ ճյուղի մասին։ Ինչ վերաբերում է Փանոսյանի թերթին, ապա այն, իր երեսնամյա գոյության ընթացքում (1866—1896) մեծ ծառայություն է մատուցել ժամանակի ընթերցողներին, արևմտահայության անհանգիստ կյանքի բազմապիսի հոդսերի քննությամբ։ Ինչպես այս թերթը, այնպես էլ հայկական դեմոկրատական մի քանի այլ օրգաններ հմտորեն գիմագրում էին այդ բռնացումներին, հնարավորության սահմաններում պահպանելով իրենց քաղաքական որոշակի դիմագիծը։ Այդ օրգաններից էին Ա. Ար-

---

[1] Տե՛ս Հայ պարբերական մամուլի պատմությունից. Երևան, 1963, հ. 1, էջ 239—274։

փիարյանի «Հայրենիքը» և Մ. Մամուրյանի «Արևելյան մամուլը», որոնց գործունեության հանդամանալից գնահատականը տրված է մենագրության մեջ։

Հայ դեմոկրատական հրապարակախոսության անփոխարինելի առաջամարտիկներ Հարություն Սվաճյանին և Հակոբ Պարոնյանին նվիրված էջերը լավագույններից են աշխատության մեջ։ Սվաճյանի «Մեղուի» պայքարի ուղղությունները կղերապահպանողական ուժերի և թուրքական բռնակալության դեմ հանուն մամուլի ազատության և անկախության, հանուն դավառահայ բնակչության ոտնահարված իրավունքների պաշտպանության, աշխատության մեջ լուսաբանված են հարցերի հանդամանալից և խոր վերլուծությամբ։ Չնայած մեր գրականագետների և պատմաբանների կողմից Սվաճյանի գործունեությունն ուսումնասիրված է բաղմակողմանիորեն և դիտական բարձր մակարդակով, «Մեղուին» նվիրված բաժիններն աչքի են ընկնում հեղինակի հետևությունների ակնհայտ թարմությամբ։ Եվ այդ օրինաչափ է, քանի որ Սվաճյանի և Պարոնյանի նման մեծությունների բազմանիստ արվեստի ուսումնասիրությունը անհնար է, որ սպավեր մեկ կամ նույնիսկ մի քանի սերունդների կողմից։

Պատմաբանի ծանրությամբ և բանասերի հայացքով Խառատյանը վեր է հանել Հակոբ Պարոնյանի մեծությունը իբրև լրագրողի, հրապարակախոսի, իբրև երգիծաբանի և քաղաքական ըմբոստ գործչի։ Նա քննել և արժեքավորել է քաղաքական սատիրայի այն բազմազան միջոցները, հնարանքներն ու գյուտերը, որոնց միջոցով Պարոնյանը կարողանում էր ժամանակի քաղաքական բարդ իրադրության պայմաններում խոսքը լսելի դարձնել ընթերցողին՝ շրջանցելով գրաքննության արգելքները։ Ուշագրավ է, սակայն, այն փաստը, որ մեծարելով հանդերձ Պարոնյան-հրապարակախոսին և մտածողին, արժեքավորելով նրա ծառայությունները հայ մշակույթին, և բերած նպաստը դեմոկրատական դաղափարների ծավալմանը երկրում, Խառատյանը չի խնայել նրա առանձին վրիպումները։ Այսպես, նա անարդարացի է դրանում «Մամուլ» դեմոկրատական թերթի խմբագիր Գ. Այվազյանի դեմ Պարոնյանի գրած բանավիճային հոդվածների սարկաստիկ բնույթը։ Ներկայացնելով բանավիճող կողմերի քաղաքական-հասարակական հավատամքը և պարզաբանելով լրագրողների հակամարտության բուն ակունքները, Խառատյանն այն հետաքրքրական հետևությանն է հանգում, որ Այվազյանի դեմ գրած Պարոնյանի աշառու հոդվածները բացասական դեր են կատարել հետագայում Այվազյանի վաստակի գնահատման հարցում։ Այդ է պատճառը, գրում է նա, որ «Մամուլը» առ այսօր դուրս է մնացել ուսումնասիրողների տեսադաշտից, եթե չհաշվենք մի քանի համառոտ ակնարկները Գ. Այվազյանի և նրա պարբերականի վերաբերյալ» (123)։

Խառատյանն իր աշխատության մեջ անդրադարձել է նաև արևմտահայ մամուլի նկատմամբ արևելահայ հրապարակախոսների քննադատական դիտողություններին և փորձել պարզաբանել դրանց դրդապատճառները։ Մեր հասարակական մտքի պատմությունից հայտնի են Գրիգոր Արծրունու կողմից 1870—1880-ական թթ. արևմտահայ մամուլին և Ազգային վարչության գործունեությանը տրված բացասական գնահատականները։ «Մշակի» խմբագիրն առանձնապես նսեմացնում էր արևմտահայերի Սահմանադրության նշանակությունը, շեշտում Ազգային վարչության կտրվածությունը զավառներից, հայ հրապարակախոսներին մեղադրում՝ ժողովրդին ապստամբության շնախապատրաստելու մեջ։ «Չխորանալով արևմտահայերի Սահմանադրության ազգային ու հասարակական նշանակության մեջ,— գրում է Խառատյանը,— Արծրունին Սահմանադրության քաղաքական սահմանափակությունը մեխանիկորեն տարածում էր նրա հասարակական արժեքի վրա» (215)։ Հեղինակն արդարացի քննադատական շեշտով է խոսում Արծրունու այն դիտողության մասին, ըստ որի արևմտահայ լրագրողները վեհերոտություն էին դրսևորում կյանքի առաջադրած հրատապ խնդիրներին արմատական լուծում տալու հարցում։ Այստեղ հրապարակախոսը հաշվի չէր առնում սուլթանական դրաքննության ստեղծած արտակարգ ծանր պայմանները։

Խառատյանի դրքի բազում էջերում երևում են, Արփիարի արտահայտությամբ՝ «պարանի վրայով» քայլող հանդուգն լրագրողները, որոնք լռելյայն կատարում էին իրենց քաղաքացիական պարտականությունները։ Մենք կուզենայինք մի երանգ ևս ավելացնել այդ գործիչների թողած հրապարակախոսական վաստակին։ Այն, որ արևմտահայ գործիչները թղթակցել են նաև արևելահայ թերթերին, հայտնի է։ Հայտնի է նաև, որ նրանցից ոմանք իրենց թերթերում քննադատել են ցարական կառավարության քաղաքականությունը այլևայլ հարցերում. բայց քչերին է հայտնի, որ նրանց պարբերաթերթերը սուլթանական դրաքննությանը ենթարկվելուց բացի որոշակի պատմա-

կան ժամանակահատվածներում «արժանացել են» նաև ցարական գրաքննության ուշադրությանը։ Այսպես, երբ 1882 թ. արծարծվում էր Հայկական հարցը, ցարական գրաքննիչները կառավարական շրջանների ուշադրությունը հրավիրում էին «Մասիս» և «Արևելյան մամուլ» պարբերականների վրա, որոնք իբր կոչ էին անում՝ Թուրքիայում ազատագրվելիք հայկական նահանգներին միացնել նաև Ռուսաստանի հայաբնակ նահանգները։ Այս առիթով Կովկասի կառավարչապետ Ա. Դոնդուկով-Կորսակովի և Կովկասի գրաքննական կոմիտեի նախագահ Կ. Յակիմովի միջև տեղի ունեցած գրագրության մեջ ևս արտահայտվել է այն միտքը, թե արևմտահայերի անկախության հասնելու շարժումները տեղի լրագրողներին ևս դրդում են քաղաքական առումով անբարեհույս հոդվածներ տպագրել, որոնցից դժվար չէ կռահել լրագրողների ձգտումը՝ Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածի կապակցությամբ պրոպագանդելու Հայաստանի վերանորոգման անհրաժեշտությունը, իբրև մի քաղաքական անկախ մարմին։

1884 թ. Ռուսաստանի մամուլի գործերի գլխավոր վարչության պետ Ե. Ֆեոկտիստովը Կովկասի գրաքննական կոմիտեին զգուշացնում է արևմտահայերի շարժումներից, որոնց ղեկավարները, ինչպես գրում է նա, առիթը չեն կորցնում Ռուսաստանի հայերի մեջ ևս տարածելու իրենց սեպարատիստական գաղափարները։ Ֆեոկտիստովը շեշտելով «Ռուսաստանի նկատմամբ առանձնահատուկ կրքով և ատելությամբ տոգորված «Հայրենիք», «Մասիս» և «Թերջիմանի Էֆքյար» թերթերի «վտանգավոր» հրապարակումները, կարդարդրում է ուժեղացնել հսկողությունը ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան հայ մամուլի նկատմամբ»[2]։

1883 թ. Կովկասի գրաքննական կոմիտեն վճիռ է արձակում արգելել Էջմիածնի Աթոռին և Հայկական հարցին նվիրված հոդվածների տպագրությունը։ 1884 թ. առաջարկ է մշակվում՝ գոնե մինչև կաթողիկոսական ընտրությունների ավարտը (1885 թ.) արգելել «առավել թշնամական ուղղության» «Արևելքի» մուտքը Անդրկովկաս[3]։

Իսկ ի՞նչ մեղքեր էին գործել վերոհիշյալ պարբերաթերթերի հրապարակախոսները։ Թեև կաշկանդված սեփական երկրի գրաքննական օրենքներով, նրանք, այնուամենայնիվ, 1880-ական թթ. հնարավորություն ունեին քննադատելու ցարական կառավարության քաղաքականությունը համազգային մի շարք խնդիրների վերաբերյալ։ Դրանք էին Էջմիածնի Աթոռի անկախության ապահովման, Պոլսեհայերի վերացնելու, կաթողիկոսական ընտրությունները կառավարության միջամտությունից զերծ պահելու խնդիրները։ Նրանք վրդովմունքի ձայն էին բարձրացնում հայկական դպրոցները 1885 թ. փակելու առիթով, քննադատում էին ցարական գրաքննության խրատությունները, որոնք Արփիարյանը անհանդուրժելի էր համարում, իբրև «ընդդեմ մտաց բարբարոսություն»[4]։

Ալբերտ Խառատյանի գիրքը աչքի է ընկնում գիտական ընդհանրացումներով և պատմական ժամանակաշրջանի իրողությունների գնահատմամբ։ Գրախոսվող աշխատությունը միաժամանակ լուրջ հայտ է արևմտահայ պարբերական մամուլի XIX դարի պատմության ստեղծման համար, որի կարիքն այսօր շափազանց մեծ է։

---

2 Մ. Մխիթարյան. Նյութեր հայ պարբերական մամուլի գրաքննության պատմությունից.— ՊԲՀ, 1968, № 2, էջ 150—152։

3 Նույն տեղում, էջ 157։

4 «Մասիս», 1884, № 3736։

Մ. ՄԽԻԹԱՐՅԱՆ

АМИРДОВЛАТ АМАСИАЦИ. *Ненужное для неучей*, пер. с армянского, вступ. статья и комментарии С. А. Вартанян. Наука, 1990. 880 с.

Մոսկվայի «Նաուկա» հրատարակչությունը, 1990 թ., 40 հազ. օրինակ տպաքանակով, լույս ընծայեց ԽՍՀՄ ԳԱ «Գիտական ժառանգություն» մատենաշարի 13-րդ հատորը, որը նվիրված է միջնադարի հայ խոշորագույն բժիշկ, ընախույզ, բառարանագիր Ամիրդովլաթ Ամասիացու (XV դար) հռչակավոր «Անգիտաց անպէտ կամ բառարան բժշկական նիւ-